



Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարեկան 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպէկով.
Թիֆլիսում գրվում են միմիային խմբագրատան մէջ.
Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն).
Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լիւրտով.
Յայտարարութիւնները համար վճարում են
խրաւարտութեամբ ըստ 2 կողմի.
Տէլէֆոն № 253.

ՀԱՄԱՐԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԵՐ

ՄՇԱԿ

ԻՐԱՆԿԱՆԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱՎԱՆ ԼՐԱԳՐՈՒՄ

«Մշակ» վեց ամսական գինը է. յուլիսի 1-ից մինչև տարեկան վերջը Վեճ ռուբլի. մէկ ամսականը—մէկ ռուբլի. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն կէս տարեկան համար 3 ռուբլի, Եւրոպայի բաժանորդները—16 ֆրանկ:
Կայտարարութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿ» գրվելու համար, եւ առհասարակ նամակներ եւ ծրարներ ուղարկելու, պէտք է գիրք հետևեալ հասցեով. ТИФЛИСЪ, Редакция «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ ТИФЛИС, Rédaction du journal arménien «MSCHAK».
Յայտարարութիւնները ընդունվում են բոլոր լեզուներով:

Ա Պ Ա Ռ Ի Կ Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ն Ձ Է Ը Ն Դ Ո Ւ Ն Վ Ո Ւ Մ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ
Անհին առարկութիւն. Ներքին Տեսութիւն. Նամակ վարչապալայի. Նամակ Երեսնայի. Ներքին լուրեր. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Շվեյցարիայի. Արտաքին լուրեր. Հեռագրութիւն. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Չինաստան եւ Եւրոպա.

ԱՆՀԱՄԱՆ ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆ
Կեռ շարունակվում է այն վէճը, որ սկսվել է մի քանի տարիներին ի վեր օտար դրամագլուխների օգտակարութեան մասին: Այդ դրամագլուխների պաշտպանները, ի միջի այլոց, յոյս ունենին, որ եւրոպական կապիտալների հետ միասին կը գան մեզ մօտ հմուտ մասնագէտներ և կը բերեն իրանց հետ արհեստագիտական կատարելագործութիւններ և գործնական անպիսի հմուտութիւններ, որոնք գոյութիւն ունենան մեզանոց մօտ: Պատրաստ դրամագլուխը, ոսկու պահեստները դեռ բարորութիւն չեն բերում մի երկրի, եթէ այդ երկիրը անկարող է կազմակերպել արդիւնաբերական գործունէութիւն, եթէ նա անկարող է նոր արդիւնքներ, նոր պարանքներ ստեղծել և ազգայնականութեան համար նոր հարստութիւններ պատրաստել: Եւ ընդհակառակը, այն տեղերում, ուր ազգաբնակչութիւնը բարձր կուլտուրական զարգացում ունի և սովոր է բազմաթիւ աշխատանքով վաճառանոցի համար պիտանի արդիւնքներ արտադրել, նա յաճախ կարողանում է խոշոր գործեր կատարել նոյն իսկ առանց ոսկու տապալանների, անտեսական գործի և կրեդիտի աջող կազմակերպութեամբ:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՉԻՆԱՍՏԱՆ ԵՒ ԵՒՐՈՊԱ
Հոկտեմբերի 13-ին դաշակիցների զօրքը բանակ դրեց Պէկինի Մէն-դին-մին անունով դռների մօտ: Լօրէ Էլփին պահանջեց իսկոյն բաց անել քաղաքի դռները, սպանալով հաւատակ դէպքում վերցնել քաղաքը յարձակուածի Սպանալիքը ազգեց. Պէկինը, Չինաստանի մայրաքաղաքը, անձատուր եղաւ եւրոպական զօրքին, որի քանակութիւնը հազիւ հասնում էր 10 հազարի: Մասնով Պէկինը, եւրոպական պատգամաւորները յայտարարեցին, որ բանակցութիւն չեն սկսի մինչև որ բոլոր զինքները չը վերադարձնեն: Միւս օրը յանձնվեցան 10 անգլիացի, 7 ֆրանսիացի և 18 ղիպի: Ազատվեց և Պարկես, որ պատմեց թէ ինչ զրկանքներ է կրել բանտում: Բայց այդ զրկանքները ոչինչ էին համեմատած միւս կալանաւորների կրած սարսափելի տանջանքների հետ: Մի քանի անգլիացիներ մահվան պատժի էին ենթարկվել զազանական անգլութեամբ: Լօրէ Էլփին, լսելով այդ բոլոր սարսափները

Բայց ահա լսվում են հակառակ ձայներ: Հենց այն բանի դէմ, որը համարվում էր եւրոպական դրամագլուխների նպատակարար կողմերից մէկը: Մայրաքաղաքի ինժեներական ընկերութեան վերջին ժողովում լեռնային ինժեներ Պ. Նոբօով կարգաց մի գեղեցում այդ ինքրի մասին և յայտնեց այն կարծիքը, որ Ռուսաստանի արդիւնագործութիւնը պէտք է կառավարվի իր մասնագէտներով, իր տեխնիկներով: Թող մեզ մօտ գան, ասաց նա, եւրոպական դրամագլուխներ, բայց օտարները իրաւունք չունենան զեկաւարող լինել այդ դրամագլուխով ստեղծված գործերում, որովհետեւ նրանք ժամանակաւոր հիւրեր են և հակված են կարճ միջոցում պոկելու մեր երկրից ինչ որ կարող են: Այդպիսի մի գեղեցում կարող է շոյել անհեռատես և նեղ ազգայնութեամբ առաջնորդող մարդկանց, սակայն նա չէ գոհացնում արդիւնաբերութեան զարգացման ինքրով զբաղված անձանց: Իրական կեանքը տեղ է տուել ամեն տեսակ մասնագէտների թէ Ռուսաստանի դպրոցներում աւարտածներին և թէ արտասահմանից եկածներին: Շատ գործարարներ դեռ չեն վստահանում հեռացնել օտար մասնագէտներին, երկիւղ կրելով, որ մի գուցէ վնասով արդիւնագործութիւնը: Եւ ինչպիսի չէ ինժեներական ընկերութեան մէջ արած առաջարկութիւնը՝ արդեւ հանդիսանալ օտարազգի մասնագէտներին և բաւականաճախ միայն սեփական ոյժերով:

Պէտք է զբաւել մասնագէտ ոյժեր առնել կողմից և աշխատել ամեն կերպ, որ նրանք գործեն երկրի մէջ: Որքան այդ անհարկութիւն չունենալով պատժել իշխան Սան-կո-լին-սինին, որ բոլոր անցքերի գլխաւոր պատճառն էր, (սա անյայտացել էր իր մօնօրների հետ), վճռեց մի վայրենի և անպատիւ վրիժառութեան դիմել, քանզի իւր իւր-իւրեք փառանքը պարտոր Անկաւած սա ամենաարատիկին, ամենամեծ վրաւորանք էր, որ ստանում էին չինացիները, որոնց կրօնի հիմնական սկզբունքն է նախնիների պաշտամունքը: Աւերման գործը յանձնվեց ֆրանսիական զինեւրա Մոնտօրանին: Գնեւորալը իր յիշողութիւնների մէջ պատմում է, որ այդ պաշտօն արհաւիր մի հոյակապ չիւթիւն էր, այնքան չեղ ճարտարապետութիւն էր ներկայացնում իր բազմաթիւ չինութիւններով, որի մասին եւրոպայում ոչ մի հասկացողութիւն չուներ: Եւ գեղարուեստի այդ հրաշալիքը աւերման ենթարկվեց, նրա մէջ պահվում էին ահագին հարստութիւններ և հին պատմական յիշատակարաններ: Անգլիական զօրքերը երկու օրվայ ընթացքում զբաղված էին աշխարհի մէջ եղակի գեղարուեստական յուշարձանները ոչնչացնելով, քաղաքում անելով եւ այլերով: Լօրէ Էլփին այս գործը մի յաւիտենական նախադրեց էր քաղաքակրթ մարդկութեան համար:

ձեր զբաղված լինելն սեփական շահերի ինքրով, նրանք անկաւած կը թողնեն երկրի մէջ կուլտուրական հեռքեր, որոնք կը նպաստեն երկրի զարգացման: Եթէ կարելի է խօսել երկրի մասին, նա պէտք է աւելի վերաբերվի կապիտալին և նրա ազդեցութեանը, քան մասնագէտներին, որոնք բերում են գիտութիւն և գործնական հմուտութիւններ: Օտարազգի մասնագէտները չեն չարիքը: Նրան պէտք է որոնել ուրիշ տեղ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՎԱՐՇԱՎԱՅԻՑ

Մայիսի 25-ին նորին մեծութիւն պարսից Մուզաֆէրէդին Շահը մուտք գործեց Վարշավա շահադատար ընդունելութիւնը սկսվեց Բրեստ-Լիտվսկից, ուր Վարշավայի ընդհանուր նահանգապետ իշխան Իմէրտինսկու հրամանով նախաձայն էր պատրաստված մեծ հիւրի համար: Քաղաքն առաւօտից հանդիսաւոր կերպարանք էր ստացել, աները զարդարված էին ոռոսաց և պարսից դրօշակներով ու գոյնզգոյն գորգերով: Հրաշալի պատկեր էր ներկայացնում առանց այն էլ գեղեցիկ Վարշավան: Ժամի 4-ին երթեւեկութիւնը բոլորովին դադարեցրած էր, ապա սկսվեց զօրքերի շարժումը: Կէս ժամից յետոյ այն փողոցներում, որոնցով պիտի անցնէր հանդիսաւոր դնացքը, այսինքն Պետերբուրգ-Վարշավան երկաթուղու կայարանից սկսած մինչև Բելլիգերման պալատը, երկու կողմից էլ խիտ կերպով շարված էին զօրքեր, որոնց թիւը հասնում էր 18,000-ի, իսկ լայն արօտաւարները լցվել էին անթիւ մարդկանցով: Շահը ժամանեց երկաթուղու գնացքով կէսօրից յետոյ ժամի 5³⁰-ին, զենեւաւաղւտանտ Արսենիւի, Սադրազամի և իր շքախմբի հետ: Երկաթուղու կայարանում Շահին դիմաւորեցին Վարշավայի ընդհանուր նահանգապետ իշխան Իմէրտինսկի, որին Շահը յայտնեց իր խորին չնորհալուութիւնը այն հանդիսաւոր ընդունելութեան համար, որ նա ունեցաւ Բրեստ-Լիտվսկում: Կայարանի արքայական սենեակներում ներկայացան քաղաքային վարչութեան ներկայացուցիչները և օտար պետութիւնների հիւպատոսները, ի միջի այլոց Վիէնայից և Բերլինից եկած պարսից զեսպաններ՝ Նարիման-խան և Բիգա-խան: Հրաւիրելով նստել իր մօտ իշխան Իմէրտինսկուն, զենեւաւաղւտանտ Արսենիւին և մեծ-վիզլերին, նորին մեծութիւնը ճանապարհվեց դէպի պալատ:

Բացի դրանից, չինական կառավարութիւնից պահանջվեց սպանված անգլիացիների և ֆրանսիացիների ընտանիքներին վարձատրութիւն տալ: 11 անգլիացիների համար ստացվեց 300 հազար լան, իսկ 7 ֆրանսիացիների համար—1,500,000 ֆրանկ: Այդ պահանջներն էլ ընդունվեցան և լօրէ Էլփին ամենաչեղ հանդէսներով մուտք գործեց Պէկին, ունենալով 600 թիւնապահներ: Լօրէին տանում էին մասնադարին պատգարակու: Փողոցներում շարված էին զօրքեր: Պէկինը ազգաբնակչութիւնը հանդարտ էր մնում և ուղում էր նայել ամեն բարբարոսի պատգարակին: Լօրէը տեսակցութիւն ունեցաւ պրինց Հունի հետ, որ պետութեան կառավարիչն էր: Ստորագրվեցան դաշնագրութեան թղթերը և այդպիսով վերադարձնեցին չինացիների փորձը՝ դիմադրելու եւրոպականութեան արշաւանքին: 1861-ին անգլիական զօրքերը բոլորովին հեռացան Չինաստանից և Պէկինում անգլիական և ֆրանսիական զեսպանները սկսեցին իրանց գործունէութիւնը:

Յրանսիացի յայտնի անտեսագէտ և գրող Պիեր Լըրու-Քոլէն նոր հրատարակեց «Ասիայի վերանորոգումը» վերնագրով մի աշխատութիւն:

լատ Շահի կառքը չընդաւառված էր ունենում, հուսարներով և Կուրանի կողակներով: Ապա հետեւում էին Շահի շքախմբը և այն աստիճանաւորները, որոնք ներկայ էին ընդունելութեան: Շահի կառքը շարվելուն պէս լսվեցին թնդանթների ուղտուկները, նուազեց մուզիկան և հազարաւոր «ուրաների» ձայներ բարձրացան:

Վերջապէս մեծ հիւրի կառքը մօտեցաւ Լահնկան պալատին, որը նշանակված էր նրա համար: Հանդէսը վերջանալուց յետոյ, Շահը, թարգմանի միջոցով, յայտնեց Իմէրտինսկուն, որ այն օրպէից, երբ ինքը մուտք գործեց ոռոսաց սահմանից, ամեն տեղ պատրաստված, ի պատիւ իրան, հանդիսաւոր ընդունելութեան մէջ նա տեսնում է նորին Մեծութեան Թագաւոր Կայսրի թանգազին բարեկամական նշանը, որ նա ոգեւորված է ամեն տեղ իրան յոյց տուած ընդունելութիւններով, բայց Վարշավայի ընդունելութիւնը գերազանցում է մինչև այսօր տեսած ընդունելութիւններին, որի պատճառով, նմանապէս բոլոր ներդրութիւնների համար խնդրում է ընդունել իր խորին չնորհալուութիւնը: Իշխանը պատասխանեց, որ այն ուրախութիւնը, որ պատճառեց նորին մեծութեան զարուստը, բոլորովին ծածկում է մեր կրած նեղութիւնները: Այս խօսակցութիւնից յետոյ Շահն անցաւ պալատի միւս սենեակները: Շահի շքախմբի մի մասը տեղաւորվեց Լահնկան պալատում, իսկ միւս մասը—մօտիկ գտնված «Սպիտակ» կոչված պալատում: Երեկոյան ժամի 9-ին պալատի առաջ, լճի վրա, ներկայացրին «Վիեննայի» երեկոյ: Մասնակցում էին լէյք-գվարդիայի Լիտուական գնդի երգիչի խումբը ու լէյք-գվարդիայի Գրոզնենեան հուսարների գնդի բալայայկա ածողների խումբը: տեղաւորված գոյնզգոյն լապտերներով լուսաւորված նաւակների մէջ, նրանք կատարում էին զանազան երաժշտական պիէսաների կատարներ մերթ երգերով, միթ շուտաներով: Պատկերը հրաշալի էր և նա հիպրեց Շահին ու նրա չընդաւառողներին: Երեկոյան քաղաքում տեղի ունեցաւ լուսավառութիւն: Մասնաւոր գեղեցիկ էր արքունական մեծ թատրոնի շինութիւնը, որը լուսաւորված էր գոյնզգոյն երկաթական լուստի:

Միւս օրը, մայիսի 26-ին, ի պատիւ Շահի, Մոխովեան դաշտում տեղի ունեցաւ մեծ զօրանդէս, որին մասնակցում էին 10,000 զինուորներ: Զօրանդէսը վերջանալուց յետոյ, Շահը չնորհեց իշխան հրամանատարին իր ականակուտ պատկերով, թանկագին քարերով զարդարված, պարսկոյից կախելու համար: Վերադառնալով զօրանդէսի տեղից, նորին մեծութիւն Շահ Մուզաֆէրէ-Էդդին պատուեց իր այցելութեամբ իշխան Իմէրտինսկուն: Ժամի 10-ին, որի մէջ հետեւեալ կերպով է նկարագրում Չինաստանի ալփման գրութիւնը: Մինչև վերջին երկուսական պատերազմը օտարերկրացիներին թոյլատրված էր ապրել և վաճառականութեամբ պարպել միայն «բաց նաւահանգիստներում», այսինքն ծովափինայ այն քաղաքներում, որոնք միջազգային դաշնագրութիւններով որոշված էին առեւտուրի համար: Այդպիսով եւրոպացի ձեռնարկողները բոլորովին կարված էին չինացի ազգաբնակչութիւնից, կարող էին իրանց ապրանքները փոխանակել տեղական ապրանքների հետ, բայց իրաւունք չուներին սկսել աշխարհի գործեր, որոնք պիտի փոփոխէին չինական արդիւնաբերութեան պայմանները: Սակայն 1895 թուականի ապրիլ ամսում կնքվեց Շիմոնոսակի դաշնագրութիւնը, որ վերջ էր դնում չինականութեան պատերազմին և որ մի և նոյն ժամանակ խոշոր փոփոխութիւններ էր մտցնում օտարերկրացիներին գրութեան մէջ: Այդ կարեւոր դիպոմաւարական թղթի վեցերորդ յօդուածը թոյլ է տալիս նոր չորս նաւահանգիստներ բաց անել օտարերկրացիների համար, իրաւունք է տալիս ճանապարհորդել դէպի այդ նաւահանգիստները տանող գետերով և ջրբանջաններով, օտարերկրացիները ոչ միայն կա-

մի 4-ին Լազնեկան պալատում քաղաքացիական ու զինուորական բարձր աստիճանաւորները ներկայացան Շահին. ներկայացնողը իշխան Իմէրէտինսկին էր: Երեկոյան ժամի 8-ին Շահը դուրս եկաւ Լազնեկան պալատից կողքով իշխան Իմէրէտինսկիի, գեներալ Արսենիւիի ու մեծ վիզիրի հետ միասին ու ուղղվեց դէպի մեծ թատրոն: Ամբոխը լցրել էր փողոցի երկու կողմերը: Շահի օթեակում գետնովն են ելնալ Իմէրէտինսկի, Սադրազամն ու գեներալ-ադիուտանտ Արսենիւի: Երբ Շահը մտաւ իր օթեակը, հանդիսականները, որոնք հրաւիրված էին յատուկ տոնակերպութիւն, որի կանգնեցին, ապա երաժշտութիւնը նուազեց պարսկական հիմնով: Յայտնի դերասաններ Բատիստինի, Բուսիտանօ ու դերասանուհի Կրուչինիցկայայի մասնակցութեամբ ներկայացրին «Եղէզնի Օնէգին» եւ «Բօնէմա» օպերաներից մի քանի գործողութիւններ ու բալետ:

Մայիսի 27-ին Շահը այցելեց բուսաբանական այգին ու հետաքրքրվեց եւրօպական դաշնադաւ բույսերով ու գեղային խոտերով: Իսկ երեկոյան բարեհաճեց լինել նորից թատրոնում:

Նորին մեծութիւնը, չորս օր մնալով Վարչալայում, հինգերորդ օրը, մայիսի 29-ին, Վարչալայից Վիէննայի երկաթուղով ճանապարհ ընկաւ դէպի արտասահման ուրախ տրամադրութեան աակ:

Գ. Յովհաննիսեան

ՆԱՍԿԱ ԵՐԵՒԱՆԻՑ

Յունիսի 6-ին

Հակառակ այն լուրերի, որ իբր թէ ներկայ հոգաբարձութիւնը նորից պիտի նշանակվի իր պաշտօնում, ստացվեց կաթողիկոսական կօնդակ՝ հոգաբարձական նոր ընտրութիւն կատարելու համար: Էջմիածնում մի կարգի սեւ հոգեւոր, որոնք լաւ յայտնի են մեր հասարակութեանը, բաւական մեծեկեղծութիւններ լաւեցին, որ հոգաբարձական ընտրութիւն չը լինի, այլ հսկող շարունակելու, եւ մենք իրաւունք ունենք երկու կողմի, որովհետեւ Շուշու փաստը մեր աչքի առաջն էր, մի փաստ, որը կը մնայ մեր գալուցական պատմութեան մէջ որպէս մի սեւ գիծ, այն էլ այն օրերին, երբ ժողովրդական ձայնը, բազմութեան ձայնը յարգող Ներսէս Վ-ի հիմնադրած դպրոցը մօտում էր իր 75-ամեակը: Սակայն այդ երկու կողմերէն վերջին կօնդակով Անկողնապահութեան պարտք կատարելով, այս անգամ կարճանագրեց մի ուրախալի երեւոյթ: Ասում են, որ մեր թեմի փոխանորդ Պարզեան արքեպիսկոպոսը, կաթողիկոսին ուղարկելով ներկայ հոգաբարձութեան հրաժարականը, խնդրել էր չուտարկել մոտ հոգաբարձական ընտրութեան կօնդակ, հակառակ դէպքում, ի նկատի ունենալ իր հրաժարականը:

Կօնդակը ստանալով՝ անմիջապէս կազմվեցին հրաւիրաթղթեր առաջիկայ կիրակի, ամսիս 11-ին, բոլոր եկեղեցիներում միաժամանակ պատգամաւորական ընտրութիւններ կատարելու համար: Սակայն այդ հրաւիրաթղթերից, որոնք կազմված են կօնդակի հիման վրա, փչում է կղերական ոգի, նկատվում է ժողովրդի իրաւունքների կրճատումն յօգուտ կղերականների: Այսպէս, մի կողմ թողած նոյն բողոքն ազատ ճանապարհորդել երկրի ներսում—մի բան, որ առաջ թող էր տրվում չինական կառավարութեան առանձին թղթերով—այլ են հիմնել պահանջների համար: Եւ պատգամներին ահալին իրաւունք էր տրվում ամեն տեսակ գործարաններ եւ արդիւնագործական ձեռնարկութիւններ սկսել Չինաստանի քաղաքներում եւ նաւահանգիստներում:

Եւ այդ արտօնութիւնները իսկոյն նոր երեւոյթներ ստեղծեցին չինացի դրութեան մէջ: Երբ տարվա ընթացքում Շահից քաղաքի մօտ կազմվեց մի ամբողջ արդիւնագործական արտաբան, ուր կային ինն հատ մեծ բամբակագործական գործարաններ, երեսուն հատ չեւրամի գործարաններ: Եւ եթէ չինացիների յարուցած արգելքները չը լինէին, այդ ձեռնարկութիւնների թիւը մինչեւ այժմ կրկնապատկված կը լինէր: Հասկանալի է, որ չինացիների աւանդական ստեղծութիւնը դէպի ամեն մի օտարերկրացի աւելի եւս պիտի գրգռէր եւրօպական կուլտուրայի այս նուաճումների պատճառով: Ատեղծութեան գլխաւոր պատճառներից մէկը Լըրուս-Բօլիէ համարում է չինական եւ եւրօպական կուլտուրաների մրցութիւնը: Որչափ չինացին խոր ուսումնասիրում է իր

իսկ այն, որ ընտրողները 25 տարեկանից փոքր եւ ընտրվող հոգաբարձուները 30-ից փոքր լինելու իրաւունք չունեն եւ իւրաքանչիւր եկեղեցի, մեծ թէ փոքր, 10-ական պատգամաւոր պիտի ընտրէ, չը գիտենք ինչու 5 հոգաբարձուներին տեղ պիտի ընտրել 8-ը, որոնցից երկուսը անպայման քահանաներ պիտի լինեն: Ինչ քահանաների կարիք կայ հոգաբարձութեան մէջ, չենք հասկանում, մինչդեռ ժողովուրդը ճշնում է ազատվել հոգեւորականների առանց այն էլ անտեղի միջամտութիւններից իր գործերի մէջ, մինչդեռ գնալով անտեղի են դառնում հոգեւորականութեան, մանաւանդ նորարոյս եղբայրների արարքները:

Բայց աւելի լաւ է դիմել կօնդակին: Ահա մի քանի կտոր. «Նախ այժմէն ազատ համարել միանգամայն անխոր զհամայն ուսուցչիս զպրնանցից ի պաշտամանց իւրեանց ի դպրանոցէն, յայտնելով գտանել ինքեանց գործ եւ տեղի, երկրորդ՝ կարգադրել ընդ փոյթ ազգաբարձի ժողովրդականաց քաղաքից յաղագս նոր ընտրութեան հոգաբարձութեանց յաղագս զըպրնանցին, նախ պատգամաւորք եկեղեցեաց յիւրաքանչիւրոյն տանական պատգամաւորք եւ ապա ընդ ձեռն պատգամաւորաց ծխակաւնաց ի դաշնի ուսումնարանին բուն հոգաբարձութեան թուով ութին, յորոց վեցն ի քաղաքացեաց եւ երկուքն ի քահանայից, իսկ վեց անձնափոխանորդք: Ընտրողք պարտ են լինել ոչ պակաս քան զքսան եւ հինգ ամեայք, իսկ ընտրելիք հոգաբարձութեան ոչ պակաս քան երեսուն ամեայք»:

«Երրորդ՝ յետ ընտրութեան պարտիք ընդ փոյթ մատուցանել մեզ ընտրողական թերթին առ ի հաստատութիւն քառամեայ ժամանակաւ: Եւ չորրորդ՝ յառաջագոյն ընդ ձեռն աւագ երկնայեւ եւ քահանայից յայտնել բարեպաշտ ժողովրդականաց կատարել զընտրութիւնն բարեկեցաւոր եւ գիտակցաւոր ի բաց թողով զամենայն անձնական եւ կուսակցական հաշիւս, չաճ զգրանցին եւ ընտրութիւնն կատարեցին, զի մի վնասեցին խաղաղ եւ հանգաւոր առանց վիճից եւ տարաձայնութեանց»:

Ա.—Դօ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ստացանք Շուշուց հետեւեալ հեռագիրը. «Այսօր, յունիսի 10-ին, հանդիսաւոր կերպով օրհնվեց Արափեկանի հաշով յինովոյ ղէպական դպրոցի հիմքը: Հանդէսին ներկայ էին շրջանի վերահսկող Լապտիսկի, Դոլուխանով, Դադաշիկ, ինչպէս նաեւ Արափեկանի պատրաստել էր պատուաւոր քաղաքացիների համար մի ճաշկերպութիւն»:

Նոյն տեղից հեռագրում են. «Ստացվել է Վեհափառ կաթողիկոսի կօնդակը, որ հրամայում է թեմական դպրոցի հոգաբարձութիւն կազմելու համար ընտրութիւններ կատարել, Արսէն Ղլոնեան վարդապետի նախագահութեամբ»:

Կանանց հարցը չուտով պէտք է քննութեան առարկայ դառնայ Պարիզի ցուցահանդէսի առիթով հրաւիրված Կանանց միջազգային ժողովում: Ծրագրերը մշակված է ընդարձակ կերպով եւ պէտք է քննվի հինգ բաժիններում:

անցեալը, այնքան նրա համար պարզ է դառնում, որ եւրօպական կուլտուրան անհամեմատ գերազանց է չինականից: Այս պատճառով էլ ատեղութիւնը դէպի եւրօպացիները աւելի մեծ չափերով չինական բարձր դասակարգի մէջ է նկատվում: Չը նայած, որ Անգլիան իր մի դաշնադրութեան մէջ պարտաւորութիւն է դրել, որ չինական պաշտօնական թղթերում եւրօպացիները «բարբարոս» չանուանվեն, իւրաքանչիւր չինացի եւրօպացուն շարունակում է բարբարոս համարել: Եւ այդ ատեղութիւնը ժողովրդի մէջ վառ է պահում զարգացած դասը, ատեղութիւնը աւելի եւ աւելի մեծ ծաւալ է ստանում, քանի որ եւրօպացիները նուաճում են Չինաստանը առեւտրական տեսակետով:

Թէ ինչպէս են եւրօպական ձեռնարկութիւնները տակն ու վրա անում Չինաստանի հնագիւրեան անշարժ կեանքը, այդ ամենից լաւ ցոյց են տալիս երկաթուղիները: Յայտնի է, որ պետութիւնները երկաթուղային գծեր են անցկացնում մի եռանդով, որ միայն սաւաղի մրցակցութեան մէջ կարելի է նկատել: Ծովափերի եկած գեները քանդում են երկրը ուղիղ ճանապարհ չինուր համար, չեն յարգում ոչ հողը, ոչ նրա մէջ գտնվող գերեզմանները:

Առաջին բաժնի առարկան կը լինի կանանց դերը բարեգործական եւ մարդասիրական առաքելութեան, երկրորդ բաժնի՝ կանանց իրաւաբանական դրութիւնը, երկրորդ՝ մանկավարժական գործունէութիւնը, չորրորդ՝ կանանց աշխատանքի խնդիրները եւ հինգերորդ՝ կանանց դերը եւ կոչումը արուեստի, գրականութեան եւ գիտութեան առաքելութեան ժողովին կը մասնակցեն երկու սեռի անձինք, վճարելով 10 ֆրանկ, իբրեւ անդամավճար:

Կիրակի, յունիսի 11-ին, լրացաւ տպագրական արհեստի հնարող Իօհան Գուտենբերգի ծննդեան հինգհարիւրամեակը: Գուտենբերգը ծնվել է 1400 թւականի յունիսի 11-ին, Գերմանիայի Մայնց քաղաքում, իսկ մեռել է 1468 թւին: Գուտենբերգի գիւտը յեղափոխութիւն գործեց համաշխարհային պատմութեան մէջ եւ առանց տպագրական արհեստի անկարելի էր այն առաջադիմութիւնը, որին հասաւ քաղաքակրթութիւնը: Գուտենբերգի յիշատակը մեծ հանդիսով տօնվեց լուսաւորված երկրներում եւ կազմվեցին հիմնարկութիւններ նրա անուանով:

Ստացանք Թիֆլիսի հայոց Հրատարակչական ընկերութեան լոյս ընծայած «Թշուառների բարեկամ»—Բժիշկ Հաւաք» գրքույկը, որ կազմել է ուսանելի փոխադրելով բժիշկ Վ. Արծրունի: Բժիշկ Հաւաք գործում էր ներկայ դարի սկզբում: Մօակվալում իբրեւ մի համեմատ, բայց մարդասէր գործիչ: Նա օտար էր, որին բարեպաշտ մի դէպք գցել էր նոր հողի վրա եւ նա մի բարի հրեշտակ դառաւ ամենքի համար: Ստորաբար, կաշառակեր յինօթիկութեան այն դարում նա միակ մարդն էր, որը յանդիման էր բողոքել իր չորսը կատարվող անիրաւութիւնների դէմ, չէր վախենում կռուի հրատարակել մեծածնների, բարձր աստիճանաւորների դէմ յանուն մարդասիրութեան եւ արդարութեան: Սէր դէպի թշուառները, դէպի հաւածվածները ու տանվողները—ահա այս առաքելի մարդու նշանաբանը: Գրքույկը բաղկացած է փոքրագրի 21 երեսից եւ արժէ 20 կօպէկ:

Թիֆլիսի քաղաքային դուման իր վերջին նիստում՝ որոշեց Նախալովա քաղաքապետարանի մօտ գտնվող Լօսիկի-Գորա կոչված տեղի աւագ հողերը բաժանել ցանկացողներին 15 եւ 20 կօպէկով բառակուսի սաժէնը: Հոգաբարձիները պէտք է արվեն այն անձանց, որոնք քաղաքի ուրիշ մասերում հող չունեն:

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են. «Թեմական դպրոցում քննութիւնները վերջացան. հետեւանք ցոյց է տալիս թէ Տիրացւ վարդապետը որչափ ընդունակ ու կարող է այդպիսի մի պատասխանատու պաշտօն կատարելու: Թէ որքան առաջադիմութիւն են ցոյց տուել աշակերտները այդ «խաղօր» տեսչի օրով, երեսուն է այն հանգամանքից, որ վերջերորդ դասարանի տասը աշակերտներից հազիւ կարողացել են երեք հոգի աւարտել դպրոցական դասընթացը. իսկ միւս դասարաններում մնացողներն ու վերաքննութիւն ստացողները ահագին % են կազմում: ամեն մէկ դասարանից միմիայն 6—7 հոգի, երբեմն էլ 4 հոգի են փոխադրվել:

Իսկ դրանք սրբազան հասկացողութիւններ են չինացիների համար: Ուստի եւ նախապաշարված, տգէտ ամբողջ կատարում է եկեղեցիների դէմ եւ գրգռվում է Չինաստանում, ուր կարգի ճանապարհների մասին ոչ ոք չէ մտածել: Բնական այժմ, կան բազմաթիւ բանւորներ, որոնք ապրում են ծանրոցներ փոխադրելով: Այդ տեսակ բանւորների թիւը հասնում է երեսուն միլիոնի: Երկաթուղիները պիտի գրկեն այդ միլիոններից մի քանիսը օրական ապրուստից: «Ո՛րք պիտի գնան եւ ինչ պիտի անեն այդ միլիոնները, որոնք ոչ մի արհեստ չը գիտեն, չունեն մի կտոր հող, չունեն ոչինչ, բացի իրանց ձեռքերից, որոնց չեն կարող առաջարկել նոյն իսկ գործարաններին, որովհետեւ Չինաստանում, մանր հոգաբարձութեան այս կրաքիւղական հայրենիքում, չը կան գործարաններ: Այս հարցը տալիս է «Сбер. Купоны» քրագիրը, մի հարց, որ իրաւ շատ ծանրակշիւ է, օրհասական»:

Աւելացրէք այս բոլորի վրա պետութիւնների այն եռանդող մրցակցութիւնը, որ սուր կրկնապատկում է առաջաւոր վերջին տասնեակը, եւ գտե՛ք կը տեսնէք, որ ներկայ արեւմտահեղ դէպքերը մեծ մասամբ այդ մրցակցութեան հետեւանք են:

Պատճառները, ինչպէս ասում են, մի քանիսն են. նախ՝ որ Տիրացւ վարդապետը չէ հասկանում իր պաշտօնը եւ չէ կարողանում առաջնորդ հանդիսանալ ուսուցչական խմբին, զրանով ուսուցիչները խաղաղութեամբ են մթնոլորտում է քաշում աշակերտներին. երկրորդ՝ ուսուցիչները աւելի շատ զբաղված են լինում դասաւորութեան ժամանակ դրսի խնդիրներով ու առօրեայ հարցերով, քան թէ իրանց առարկայով. երրորդ՝ աշակերտները իբր թէ առեւտրականացան ուսուցիչների, չեն կամեցել նրանց առարկայով պարագայի, ուրիշ խօսքով՝ բանի տեղ չեն դրել: Ահա այդ բոլորի հետեւանքն է ալսօրվայ տխուր իրականութիւնը»:

ՂՈՒՐԱՅԻՑ մեզ գրում են. «Բազում քաղաքային վարչութիւնը ուղարկել է Ղուբա ինժեներ Պօպովիչին եւ թարգման յոյն Պօպօպովիչին, որպէս զի որոնեն ջուր խողովակով Բագու տանելու համար: Եկողները չըբնում են գիւղից դուր, եղել են շատ գիւղեր, ինչպէս օրինակ Հաղբան, Գիւնդուղ, Կալա եւ այլ գիւղերը, բայց հաւանական է, որ ջուր կը տանեն Սամուր գետից, որը թէ առատ է ջրով եւ թէ առողջարար է»:

ՍԱԼԵԱՆԻՑ մեզ գրում են. «Մեր գաւառում ընդհանրապէս բոլոր գիւղացիները տուժեցին երաշտութիւնից. ցանքներն ամեն տեղ այրվեցին, անձրեւ չեղաւ եւ գետերն էլ չը մեծացան. բայց ամենից շատ տուժեցին երեք գիւղական համայնք՝ Օթուգիքի, Սօնլըղ, Կարակնչի եւ Չարիբըրը համայնքները: Մայիսի 12-ին եկած կարկուտը ոչնչացրեց գիւղացիների վերջին յոյսը՝ բանջարանոցները եւ քունջութի արտօնը: Շնորհիւ հարկային տեսուչ Կոնյարի աւանաւորներից աշխատութեան, կառավարութիւնը այդ գիւղացիներին փոխառութիւն տրուեց եւ հարկից երեք տարով ազատեց: Ո՛րք էր, որ այդպիսի պաշտօնեաներ լինէին գիւղացիների համար, այն ժամանակ գիւղացին հանդիսու ու խաղաղ կը վարվէր իր աշխատանքի պտուղը, օրհնելով «վերեւում Աստուծուն, ներքեւում Թագաւորին»: Սովորաբար, գիւղացու հոգաբարձութեան պաշտօնեան նրա տնտեսական քաղաքական պատճառն է, մանաւանդ ա մ ր ա ի գ ի լ ա ռ ի ս յ ի պ ա շ տ ն ե ա ն երը... Շնորհիւ կառավարութեան նպատակ մեր գաւառի գիւղական ազգաբնակչութիւնը, թէեւ մեծ նեղութեամբ, իր ճիւղաժամից դուրս եկաւ անխորձ: Մարտին արդէն դաշտերը ծածկվեցին պարարտ դաշտերով: Նորարոյս խոտի վրա՝ անասունների կտորածը կտրվեց: Արտերը հիւնալի կերպով աճում էին: Երկու կար մարդերից, զրա կտանցի էլ անցաւ, թէեւ բուսականին արտի փայլերից, առանձնապէս Թէլեւսուարի կողմերում, «Բուլղար»-չայ, գետակի ափով: Գետերը առատութեամբ յորդեցին եւ ջրեցին թէ արտերը եւ թէ դաշտերը: Հացահատիկների հունձը սկսված է. գարին հնձած են, հնձում են ցորենը: Անբերրութիւնից աւելի վնասվածները, Արաքսի ափի ազգաբնակչութիւնը, սկսել է ուտել նոր բերքը—գարու հաց, եւ շատ գոհ է. չուտով կուտեց ցորենի հացը: Քունջութի, կորեկի ցանքները շատ գեղեցիկ վիճակի մէջ են»:

Ինչ էլ լինի, բայց իրերի գրութիւնը շատ սուր եւ բարդ կերպարանք է ընդունել երկնային պետութեան մէջ: Ռուսաց կառավարութիւնը պաշտօնական հաղորդագրութեամբ յայտարարեց աշխարհին թէ պետութիւնները, իրանց գործերը ուղարկելով «Մեծ բուռնցքի» դէմ, նպատակ ունեն ճնշել ապստամբութիւնը, վերականգնել խաղաղութիւնը եւ պահպանել չինական թագաւորող տունը: Ոչինչ չը պիտի փոխվի Չինաստանում—այսպէս է այս կարգի ամենահզօր պետութիւնների մէկի, Ռուսաստանի, վճիռը: Սակայն, հեռագրական կցիւրտուր տեղեկութիւնները այնպէս են ցոյց տալիս, որ չինական կառավարութիւնը «Մեծ բուռնցքի» կողմն է: Ինչ կը լինի այն ժամանակ, երբ յայտնի դառնայ, որ ինքը չինական կառավարութիւնն էլ ամբողջ պէս առում է եւրօպացիների եւ միանգամայն համակրում է ներկայ արեւահանգութիւնների հեղինակներին: Այն ժամանակ պետութիւնները, ի հարկէ, հարկադրված կը լինեն ուրիշ կերպ լուծել չինական հարցը: Բայց կաջողվի՞ դա առանց եւրօպական պատերազմների—Ահա հարցը:

Типографія Грузинск. Т—ва, Большая-Ванская ул., № 27.